ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԻՆԱՍՅԱՆ

# ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄՍՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա առանձին ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

***Գիտական ղեկավար՝*** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Լուկաշի Աթոյան

***Պաշտոնական ընդդիմախոսներ՝*** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Եղիշի Կիրակոսյան

տնտեսագիտության թեկնածու Արթուր Ռաֆիկի Թամազյան

***Առաջատար կազմակերպություն՝*** ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. մարտի 10-ին, ժամը 15[30]-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է՝ 2016թ. փետրվարի 10-ին:

014 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝
Ս.Ա.Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

***<u>Հետազոտության թեմայի արդիականությունը:</u>*** Ժամանակակից տնտեսությունում էապես մեծացել է տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կայունության, նրանց մրցունակության ապահովման կարևորությունը: Շուկայական հարաբերությունների զարգացումը, մի կողմից, նպաստում է գործունեության արդյունավետության բարձրացմանը, իսկ մյուս կողմից՝ մեծացնում է կազմակերպության կենսապարբերաշրջանի ցանկացած փուլում ճգնաժամային իրավիճակների առաջացման ռիսկը: Ֆինանսական կայունության ապահովման խնդիրը առանձնահատուկ կարևորություն է ստանում ապահովագրական ընկերությունների համար, որը տնտեսության կարևորագույն տարրերից է և ունի մեծ նշանակություն ժամանակակից տնտեսության արդյունավետության բարձրացման գործում:

Սեփականության ձևերի փոփոխությունը, շուկայական մրցակցության ուժեղացումը, ֆինանսական և սպառողական շուկաներում ճգնաժամային երևույթների առաջացումն ու զարգացումը և բազմաթիվ այլ ռիսկերի մեծացումը պահանջում են ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունն ու ճգնաժամի պայմաններում ռազմավարական նպատակների իրագործումն ապահովող կառուցակարգերի և գործիքների կատարելագործում, նոր մեթոդական մոտեցումների մշակում: Այդպիսի կառուցակարգերից է ապահովագրական ընկերությունների արդյունավետ հակաճգնաժամային կառավարումը, որը վերջին ժամանակաշրջանում լայն քննարկման առարկա դարձավ՝ պայմանավորված գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամով: Ճգնաժամային վիճակում գտնվող կազմակերպությունների կառավարման փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակաճգնաժամային կառավարման միջոցներն ու մեթոդները հաճախ ընտրվում են առանց հիմնավորման և ունեն ոչ բավարար արդյունավետություն, իսկ ղեկավարների կամ արբիտրաժային կառավարիչների հիմնական մասը չի կիրառում հակաճգնաժամային կառավարման գիտականորեն հիմնավորված միջոցառումներ[1]: Հիմնականում կիրառվում են ֆինանսական վերլուծության առանձին մեթոդներ, իրականացվում են ըստ առանձին ուղղությունների մարքեթինգային հետազոտություններ: Որոշ դեպքերում կիրառվում են հակաճգնաժամային կառավարման առանձին գործիքներ: Ներկայումս բացակայում է հակաճգնաժամային միջոցառումների ամբողջական, գիտականորեն հիմնավորված համակարգը, որը կարելի է կիրառել

[1] Международный опрос членов комитетов по аудиту 2014 год. Институт аудиторских комитетов КПМГ, KPMG.com/globalacl.com

կազմակերպությունների գործունեության բացասական միտումները և տարրերը կանխատեսման և կանխարգելման համար: Հակաճգնաժամային կառավարման վերաբերյալ կատարված հետազոտությունների և գիտական հրապարակումների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ բավարար խորությամբ մշակված չեն հակաճգնաժամային կառավարման մեթոդական հիմնահարցերը, մասնավորապես հակաճգնաժամային արդյունավետության և ֆինանսական կայունության ապահովման խնդիրը միկրոմակարդակում, հատկապես տնտեսական գործունեության այնպիսի առանձնահատուկ սուբյեկտների համար, ինչպիսիք են ապահովագրական ընկերությունները: Վերոնշյալ հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ է պայմանավորված սույն ատենախոսության թեմայի արդիականությունը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության նպատակը ՀՀ ապահովագրական ընկերությունների հակաճգնաժամային կառավարման արդի հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրության և վերլուծության հիման վրա մշակել առաջարկներ հակաճգնաժամային կառավարման կառուցակարգի ձևավորման տեսական և գիտամեթոդական մոտեցումների արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Նշված նպատակին հասնելու համար կարևորվել են լուծումներ պահանջող հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել հակաճգնաժամային կառավարման մեխանիզմները և մոտեցումները,
- բացահայտել ապահովագրական ընկերություններում ճգնաժամերի առաջացման պատճառներն ու գործոնները,
- հստակեցնել, «հակաճգնաժամային կառավարում» հասկացության բովանդակությունը,
- հետազոտել միջազգային պրակտիկայում հակաճգնաժամային կառավարման զարգացման արդի միտումներն ու առանձնահատկությունները,
- վերլուծել ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի ախտորոշման կիրառվող մեթոդները և առաջարկել տնտեսամաթեմատիկական ապարատի հիման վրա մշակված ճգնաժամային վիճակի ախտորոշման կառուցակարգ,
- մշակել ապահովագրական ընկերություններում հակաճգնաժամային կառավարման տնտեսական կառուցակարգի ձևավորման սկզբունքները և արդյունավետության գործոնները, առաջարկել հակաճգնաժամային կառավարման ուղղությունները:

**Հետազոտության առարկան և օբյեկտը:** Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը ՀՀ ապահովագրական

ընկերություններում ձևավորված հակաճգնաժամային կառավարման համակարգն է, իսկ ուսումնասիրության առարկան ապահովագրական ընկերություններում հակաճգնաժամային կառավարման համակարգի կառուցակարգերն են և այդ գործընթացում առաջացող կազմակերպատնտեսական հարաբերությունները:

**Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:** Ատենախոսության համար հիմք են հանդիսացել ինստիտուցիոնալ տեսության, մենեջմենթի, հակաճգնաժամային կառավարման և ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հեղինակների կողմից կատարված հետազոտությունները, հրապարակումները և գիտավերլուծական նյութերը:

Ատենախոսության տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) հրատարակումները, ՀՀ ապահովագրական ընկերությունների հաշվետվությունները, միջազգային կազմակերպությունների տեղեկագրերը և փորձագիտական գնահատականները, ինչպես նաև ուսումնասիրվող հիմնախնդրին վերաբերող միջազգային խորհրդատվական ընկերությունների վերլուծական նյութերը, ՀՀ-ում հակաճգնաժամային կառավարման համակարգի և ապահովագրական գործունեությունը կարգավորող օրենսդրական և նորմատիվային ակտերը, էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատական, համակարգային, վիճակագրական վերլուծության, ինչպես նաև տնտեսամաթեմատիկական մեթոդներ:

**Հետազոտության գիտական նորույթը և արդյունքները:** Հետազոտության արդյունքներն իրենց բնույթով ունեն տեսական, մեթոդական և կիրառական ուղվածություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- Առաջարկվել և հիմնավորվել է ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության դասակարգման նոր մոտեցում, որը հնարավորություն կտա ճշգրտել բնութագրերը և դրանից կախված մշակել ռազմավարություններ:
- Ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակի ախտորոշման տեսական և գործնական մոտեցումների վերլուծության հիման վրա մշակվել և առաջարկվել է ապահովագրական ընկերությունների ճգնաժամային վիճակի ախտորոշման կառուցակարգ՝ հիմնված տնտեսամաթեմատիկական ժամանակակից ապարատի վրա, որը թույլ կտա կանխատեսել ապահովագրական ընկերության գործունեության ցուցանիշների հնարավոր փոփոխությունները՝ նրա զարգացման

ռազմավարության ճշգրտման և համապատասխան հակաճգնաժամային միջոցառումների մշակման համար:

- Մշակվել է ապահովագրական ընկերության հակաճգնաժամային կառավարման հայեցակարգային մոդել և առաջարկվել դրա ներդրման ուղղությունները և աշխատանքների բարելավման եղանակները:
- ՀՀ ապահովագրական ընկերությունների հակաճգնաժամային կառավարման առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրության հիման վրա՝ մշակվել և հիմնավորվել են ՀՀ ապահովագրական ընկերություններում հակաճգնաժամային կառավարման տնտեսական կառուցակարգի ձևավորման սկզբունքները և մեթոդական մոտեցումները:

**Հետազոտության գործնական նշանակությունը և արդյունքների փորձարկումը:** Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ու հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոններում: Հակաճգնաժամային կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունները կարող են օգտագործվել ապահովագրական ընկերությունների հակաճգնաժամային կառավարման գործընթացում, հակաճգնաժամային կառավարման կատարելագործման նպատակով միջոցառումներ մշակող ընկերությունների խորհրդատվության ժամանակ, հակաճգնաժամային կառավարիչների և աուդիտորների պատրաստման և որակավորման բարձրացման գործընթացում, ինչպես նաև ԲՈՒՀ-երում և հետբուհական կրթության համակարգում

**Ատենախոսության կառուցվածքը, ծավալը և հրապարակումները:** Ատենախոսության տեքստը շարադրված է 140 համակարգչային էջի վրա և բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքում պարունակվում են տեղեկատվական, վերլուծական և հաշվարկային աղյուսակներ ու գծապատկերներ: Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի հինգ գիտական հոդվածներում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

***Ներածությունում*** հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, ձևակերպվել են հիմնական գիտական արդյունքները ու նորույթը, դրանց տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

***Ատենախոսության առաջին՝ «Հակաճգնաժամային կառավարման տեսական և մեթոդաբանական հիմքերը»*** գլխում ներկայացված են հակաճգնաժամային կառավարման էությունը, սկզբունքները, տեսությունները և հայեցակարգային մոտեցումները, ինչպես նաև հակաճգնաժամային կառավարման միջազգային փորձը:

Ժամանակակից կազմակերպությունների կառավարումն իրականացվում է արտաքին տնտեսական միջավայրի բարձր անկայունության պայմաններում, հետևապես ճգնաժամի առաջացման հավանականությունը գոյություն ունի ցանկացած կազմակերպությունում: Ընդ որում, շուկայական տնտեսությանը բնորոշ առանձնահատկություններից է այն, որ ճգնաժամային իրավիճակները կարող են ի հայտ գալ կազմակերպության կենսապարբերաշրջանի բոլոր փուլերում (կայացում, աճ, հասունություն, անկում): Այսօր ցանկացած տնտեսական համակարգ շահագրգիռ է իր գործունեության մեջ հակաճգնաժամային կառավարման արդյունավետ եղանակների և գործիքների օգտագործման մեջ: Հակաճգնաժամային կառավարման վերաբերյալ գիտական աշխատանքներում և հրապարակումներում բերված բազմաթիվ սահմանումների ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ առ այսօր գոյություն չունի, «հակաճգնաժամային կառավարում» հասկացության, դրա բովանդակության վերաբերյալ միասնական մոտեցում: Հակաճգնաժամային կառավարմանը վերաբերող մասնագիտական գրականության մեջ և գործարար գործընթացների կառավարման պրակտիկայում առկա մոտեցումների ամփոփման արդյունքում հեղինակը առանձնացրել է հակաճգնաժամային կառավարման սահմանման երկու ուղղություն.

- Շեշտը դրվում է ճգնաժամի կանխարգելման վրա,
- Շեշտը դրվում է ճգնաժամի հետևանքների վերացման վրա:

Ատենախոսությունում առաջարկվել է հակաճգնաժամային կառավարման նոր սահմանում, ըստ որի, հակաճգնաժային կառավարումը կառավարման համակարգ է, որն ունի համալիր, համակարգային բնույթ, ներառում է ռազմավարական և

մարտավարական բնույթի կառավարչական միջոցառումներ՝ ուղղված տնտեսության բոլոր մակարդակներում ճգնաժամային երևույթների ու պատճառների ախտորոշմանը, կանխարգելմանը, չեզոքացմանը և հաղթահարմանը, որի հիմնական նպատակն է ճգնաժամային վիճակներին հանգեցնող առավել վտանգավոր իրավիճակների չեզոքացումը:

Հակաճգնաժամային կառավարման էությանը վերաբերող տեսական մոտեցումների վերլուծության հիման վրա աշխատանքում հստակեցվել են հակաճգնաժամային կառավարման առարկան, օբյեկտը և հիմնական գործառույթները: Ատենախոսության շրջանակներում քննարկվել են նաև հակաճգնաժամային կառավարման տեսական հիմքերը, դրանց զարգացման արդի միտումները:

Հակաճգնաժամային կառավարման միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա աշխատանքում ներկայացվել են այդ փորձի տեղայնացման հնարավորությունները:

***Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ ապահովագրական ընկերությունների հակաճգնաժամային կառավարման արդյունավետության գնահատումը»*** գլխում ներկայացված են ՀՀ ապահովագրական համակարգի ձևավորման առանձնահատկությունները և հիմնական բնութագրիչները, վերլուծվել են ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության ապահովման հիմնական մոտեցումները, ուսումնասիրվել են ապահովագրական ընկերությունների ճգնաժամային վիճակի ախտորոշման մեթոդների արդյունավետությունը, բացահայտվել դրանց կիրառման սահմանափակումները:

Խորհրդային տարիներին ամբողջ ԽՍՀՄ տարածաշրջանի համար գործում էր ընդհանուր ապահովագրական համակարգը և ապահովագրական ծառայությունների մատուցումը պետական մենաշնորհ էր: 1988թ. ապահովագրական գործունեություն իրականացնելու իրավունք ստացան նաև ոչ պետական ապահովագրական ընկերությունները: Արդյունքում 1996թ. երկրում գործում էին 82 ապահովագրական ընկերություններ:

Հեղինակի կողմից ուսումնասիրվել և վերլուծություններ են իրականացվել ՀՀ ԿԲ-ի կողմից ընդունված կանոնակարգերի և ապահովագրական ընկերությունների գործունեության վրա դրանց ունեցած ազդեցությունների ուղղությամբ, որոնց արդյունքում առավել ընդգծված են դարձել ՀՀ ԿԲ-ի կողմից ապահովագրական շուկայի կարգավորման խստացման միտումները: Դրանք իրենց ազդեցությունն ունեցան ապահովագրական ծառայություններ

մատուցող կազմակերպությունների քանակի վրա: Այսպես, սկսած 2005թ.-ից ապահովագրական ընկերությունների քանակը նվազել է՝ 2014թ տարեվերջի դրությամբ հասնելով 6 ընկերության, որոնք ոչ կյանքի ապահովագրության գծով ծառայություններ մատուցելու իրավունք ունեն, և տարբերվում են ըստ լիցենզավորման դասերի: 2014 թվականին ՀՀ ապահովագրական ընկերությունների կողմից կնքված ապահովագրության պայմանագրերի տեսակները ներկայացված են գծապատկեր 1-ում:




**Գծապատկեր 1. Ըստապահովագրության տեսակների կնքված պայմանագրերի կառուցվածքը 2014թ. դրությամբ[2]**

Ներկայումս ապահովագրական ընկերությունների հիմնական մասը որպես հաճախորդ թիրախային խմբեր է ընտրել ֆիզիկական անձ ապահովադիրներին: Ընկերությունների մյուս մասը շեշտը դրել է իրավաբանական անձ ապահովադիրների վրա: ՀՀ ապահովագրական ընկերությունների հաճախորդների բազայի կառուցվածքը և դինամիկան ներկայացված են գծապատկերներ 2[3]:

[2] https://www.cba.am/am/SitePages/pperiodicals.aspx
[3] www.e-cis.info/foto/pages/24222.doc
Исполнительный комитет СНГ. Современное состояние страхового надзора и регулирование страховой деятельности в государствах-участниках СНГ (информационно-аналитический материал), Москва 2014г.




**Գծապատկեր 2. Ապահովագրական հատուցումների կառուցվածքը 2014թ.**

ՀՀ ապահովագրական համակարգի զարգացման արդի միտումները վկայում են երկրի սոցիալ-տնտեսական և ֆինանսական հարաբերությունների համակարգում նրա դերի աստիճանական ուժեղացման մասին: Այդուհանդերձ, ապահովագրական համակարգի զարգացումը բնութագրող ընդհանուր ցուցանիշները գտնվում են ցածր մակարդակի վրա: Ատենախոսությունում հեղինակի կողմից ուսումնասիրվել և բացահայտվել են ՀՀ ապահովագրական շուկայի բնորոշ գծերը.

ՀՀ ապահովագրական շուկան ներկայումս գտնվում է անհավասարակշռության, հստակ կոմնորոշիչների բացակայության վիճակում: Այսպես, ՀՀ ապահովագրական ընկերությունների ապահովագրավճարների միագումար ծավալը 01.04.2015թ. դրությամբ կազմել է 9.416 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակշրջանի նկատմամբ նվազելով 8.8%-ով, իսկ ապահովագրական հատուցումների ընդհանուր ծավալը կազմել է ավելի քան 3.237 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազելով 40.9%-ով: Ընդորում, ապահովագրավճարների 75%-ը բաժին է ընկնում ԱՊՊԱ-ի մասով վճարներին, իսկ մնացածը՝ կամավոր ապահովագրության տեսակներին: Միաժամանակ, Հայաստանի ապահովագրական հատվածի վնասաբերության ցուցանիշը ԱՊՊԱ-ի մասով 2015թ. հունիսին կազմել է 51%՝ ապրիլի համեմատ ավելանալով 1%-ով: Արդյունքում ապահովագրական համակարգն 2015թ. առաջին եռամսյակը եզրափակել է 620 մլն դրամ զուտշահույթով՝ տարեկան կտրվածքով նվազելով 31%-ով: Նշված ժամանակահատվածում ապահովագրավճարների անկում է արձանագրվել ՀՀ ապահովագրական շուկայում գործող 6 ընկերություններից 4-ում, իսկ ապահովագրական հատուցումների անկումն արձանագրվել է պահովագրական շուկայի բոլոր ընկերություններում: Նույն ժամանակահատվածում նվազել են

ապահովագրողների ակտիվները 5.3%-ով[4]: Անհրաժեշտ է նշել նաև, որ ՀՀ ապահովագրական ընկերությունների ապահովագրական պորտֆելներում մանրածախ ապահովագրության մասնաբաժինը 2015թ. առաջին եռամսյակում կազմել է 58.6% (5.522 մլն դրամ), իսկ կորպորատիվ ապահովագրության մասնաբաժինը 41.4% (3.894 մլն դրամ): Միևնույն ժամանակ մանրածախ ապահովագրական շուկայի ծավալը մեկ տարում կրճատվել է 19.7%-ով, իսկ կորպորատիվ ապահովագրության ծավալն աճել է 12.7%-ով[5]:

Ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի համալիր բնութագիրը նրա ֆինանսական կայունությունն է, որի մակարդակի որոշումը կազմակերպության տնտեսական վիճակի վաղ ախտորոշման և ճգնաժամի ու սնանկացման կանխման անբաժանելի մասն է, հակաճգնաժամային կառավարման հիմքը: Վերլուծության արդյունքում ատենախոսը հանգել է այն եզրակացության, որ ՀՀ օրենսդրությամբ, ինչպես և անցումային տնտեսություն ունեցող երկրների գերակշռող մասի օրենսդրական դաշտում, «ֆինանսական կայունություն» հասկացությունը սահմանված չէ, ինչը դժվարեցնում է ինչպես տվյալ հասկացության, այնպես էլ այդ հասկացության հետ խիստ փոխկապակցված «վճարունակություն» հասկացության մեկնաբանությունը: Ապահովագրական ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում որևէ կերպ նշված չէ ֆինանսական կայունության դերը ապահովագրական կազմակերպությունների գործունեության մեջ: Նախատեսված չեն նաև ապահովագրող կազմակերպությունների պարտավորությունները՝ ուղղված իր գործունեության իրականացման ժամանակ ֆինանսական կայունության ապահովմանը: Արդյունքում օրենսդրորեն պատասխանատվությունը սահմանվում է ոչ թե ապահովագրող կազմակերպության ֆինանսական կայունությունը մշտապես ապահովելու պարտավորության համար, այլ ստանձնած պարտավորությունների չկատարման և օրենսդրությունը խախտելու համար: Հետևաբար, տվյալ հարցի նորմատիվային կարգավորումը անբավարար է:

Հակաճգնաժամային կառավարման կառուցակարգի շրջանակներում ապահովագրական ընկերության, ինչպես և ցանկացած կազմակերպության առաջնահերթ խնդիրներից է ֆինանսական վիճակի մշտադիտարկումը և ախտորոշումը՝ գործունեության առկա և պոտենցիալ հիմնախնդիրների նույնականացման և ճշգրտող ու կանխող բնույթի համապատասխան միջոցառումների մշակման

[4] Տվյալները վերցված են ՀՀ ԿԲ ստանդարտներին համապատասխան ապահովագրական ընկերությունների ներկայացրած հաշվետվություններից:
[5] http://www.armbanks.am/hy/2015/07/23/89966/

նպատակով: Ձևավորված վերլուծական համակարգ ունեցող կազմակերպությունը կարող է վաղօրոք բացահայտել առաջացող ճգնաժամը, օպերատիվ արձագանքել դրան, նվազեցնելով ռիսկի աստիճանը: Հարկ է նշել, որ հակաճգնաժամային կառավարմանը վերաբերող գրականության մեջ տարբեր կազմակերպությունների ֆինանսական վիճակի ախտորոշման (որի հանգուցային դրույթը սնանկացման հավանականության հաշվարկն է) մոդելներն ու մեթոդները ներկայացված են բավականին ընդարձակ և լայնածավալ: Միևնույն ժամանակ ապահովագրական ընկերությունների վիճակի ախտորոշման հիմնախնդիրը քննարկված է ոչ բավականաչափ: Այդ պատճառով էլ ապահովագրական ընկերությունների ֆինանսական անկայունության և սնանկացման՝ ճգնաժամային վիճակի ախտորոշման կառուցակարգի մշակումն արդիական է նաև ՀՀ ապահովագրական ընկերությունների համար: Տեսական և էմպիրիկ հետազոտությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ ներկայումս կարելի է առանձնացնել ֆինանսական անկայունության և սնանկացման հավանականության գնահատման վերաբերյալ երկու հիմնական մոտեցումներ:

Առաջին մոտեցումը՝ «որակականը», հիմնված է սնանկացման ուղղությամբ զարգացող գործարարությանը բնորոշ որոշակի բնութագիրչների ուսումնասիրության վրա: Ըստ ատենախոսի, տվյալ մոտեցման կիրառումը ՀՀ-ում դժվարեցված է սնանկացման լիարժեք և հավաստի վիճակագրության բացակայության պատճառով:

Երկրորդ մոտեցումը՝ «քանակականը», հիմնված է ֆինանսական տվյալների վերլուծության վրա և ներառում է որոշակի ֆինանսական գործակիցների կիրառություն: Դրանք բազմագործոն ռեգրեսիոն մոդելներ են, որոնք հաշվի են առնում տնտեսության և ֆինանսական կառավարման բնագավառում, կապիտալի շուկաներում փոփոխությունները և մի շարք այլ գործոններ: Սակայն այդ մեթոդները, հեղինակի կարծիքով, ունեն բազմաթիվ թերություններ և սահմանափակումներ, ինչը զգալիորեն նվազեցնում է ՀՀ-ում դրանց կիրառման ոլորտը: Բացի այդ, նշված մոդելները հաշվի չեն առնում ապահովագրական ընկերությունների գործունեության բնույթը:

Ապահովագրական ընկերության անվճարունակության (ճգնաժամային վիճակի) ախտորոշման համար ատենախոսի կողմից առաջարկվել է կառուցակարգ (գծապատկեր 3), որը հաշվի է առնում ապահովագրական գործունեության առանձնահատկությունները և հիմնված է ապահովագրողի ֆինանսական հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության և դրա բացահայտման առանձնահատկությունների վրա: Ներկայացված կառուցակարգի

կիրառումը, ըստ հեղինակի, հնարավորություն կտա վերացնել վերոնշյալ մոդելների թերությունները:




**Գծապատկեր 3. Ապահովագրական ընկերության ճգնաժամային վիճակի ախտորոշման առաջարկվող կառուցակարգը**

Ատենախոսությունում մշակվել է ապահովագրական ընկերության ճգնաժամային վիճակների մատրիցա, որը թույլ կտա որոշել ապահովագրական ընկերության հակաճգնաժամային միջոցառումների բնույթը և, հետևաբար, մշակել ապահովագրական գործունեության զարգացման ռազմավարությունը՝ կախված ապահովագրական ընկերության գործունեությունում ճգնաժամային երևույթների բնույթից, փուլից և խորության աստիճանից:

***Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ ապահովագրական ընկերությունների հակաճգնաժամային կառավարման համակարգի զարգացման հիմնական ուղղությունները»*** գլխում ամփոփվում և համադրվում են ատենախոսության երկու գլուխներում կատարված ուսումնասիրության արդյունքները և, ստանալով ընդհանրական պատկեր՝ մատնանշվում են հակաճգնաժամային կառավարման համակարգի զարգացման գերակայությունները: Միևնույն ժամանակ

առաջարկվել և հիմնավորվել են հակաճգնաժամային կառավարման արդյունավետության բարձրացման կառուցակարգերը:

Ապահովագրական ընկերությունների գործունեությունը անկայուն շուկայական տնտեսության պայմաններում կապված է բարձր աստիճանի ռիսկի և անորոշության հետ: Ռիսկի գործոնների ազդեցությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է ինտեգրել հակաճգնաժամային մենեջմենթը կազմակերպության կառավարման ընդհանուր հայեցակարգին և ապահովել համապատասխան գործիքներով և մեթոդներով: Այդ պատճառով էլ ռիսկի կառավարման համակարգի (ռիսկ-մենեջմենթի) ներդրումը հանդիսանում է ապահովագրական ընկերության հակաճգնաժամային կառավարման որոշիչ տարրերից մեկը: Թեև տվյալ ուղղությամբ իրականացված են ինչպես իրավական, այնպես էլ ինստիտուցիոնալ բնույթի մի շարք բարեփոխումներ, ապահովագրական ընկերությունների հակաճգնաժամային կառավարման համակարգում այս տեսանկյունից դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ: Որպես այդ հիմնախնդիրների լուծում ատենախոսի կողմից առաջարկվել է ռիսկ-կողմնորոշված մոտեցման ներդրումը ապահովագրական ընկերության բոլոր գործընթացներում: Այդ նպատակով հեղինակի կողմից մշակվել է հայեցակարգային մոդել և առաջարկվել դրա ներդրման ուղղությունները և աշխատանքների բարելավման եղանակները:

**Ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ.**

Ապահովագրական ընկերությանը բնորոշ ռիսկերի բացահայտման ճգնաժամային իրավիճակների կանխման նպատակով ռիսկերի կառավարման համակարգում առաջարկվել է ներառել ռիսկերի կառավարման ռազմավարությունը, որով սահմանվում են ռիսկերի կառավարման առումով ապահովագրական ընկերության ընդհանուր մոտեցումները/նպատակները: Ընդ որում, ռիսկերի կառավարման ռազմավարության մշակման ժամանակ պետք է հաշվի առնվեն ապահովագրական ընկերության խորհրդի կողմից հաստատված գործարար ծրագիրն և նրա կողմից իրականացվող գործարար գործընթացները, առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները, ինչպես նաև ռիսկերի նվազեցմանն ուղղված կառուցակարգերի կիրառումը: Ռիսկերի կառավարման համակարգի ձևավորման, կենսագործման և արդյունավետության շարունակական մշտադիտարկման ապահովման լիազորությունները անհրաժեշտ է վերապահել ապահովագրական ընկերության խորհրդին, իսկ գործադիր մարմնին՝ ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ կիրառման, ինչպես նաև խորհրդի կողմից հաստատված

ընթացակարգերի և այլ ներքին իրավական ակտերի՝ ամբողջ ընկերությունում արդյունավետ շրջանառության ապահովելը:

Ռիսկերի կառավարման գործընթացի արդիականությունը և հիմնավորվածությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է պարբերաբար (նախապես սահմանված ժամանակահատվածում) վերանայել ռիսկերի կառավարման գործընթացը:

**Ներքին հսկողության համակարգի բարելավմանը վերաբերող առաջարկություններ.**

Ապահովագրական ընկերության յուրաքանչյուր հանգուցային գործարար գործընթացի համար պետք է ներդրվեն համապատասխան հսկողական մեխանիզմներ՝ կանխարգելող (ուղղված անցանկալի արդյունքների կանխարգելմանը), բացահայտող (ուղղված անցանկալի գործառնությունների բացահայտմանը), ինչպես նաև անցանկալի հետևանքները վերացնող (ուղղված անցանկալի հետևանքների վերացմանը): Ատենախոսությունում առաջարկվել են անցանկալի արդյունքների/գործառնությունների բացահայտման, կանխարգելման և վերացման հսկողական մեխանիզմները:

Ներքին հսկողության համակարգի ձևավորումը առաջարկվում է իրականացնել հետևյալ վեց փուլերով.

- ✓ Ապահովագրողի ներքին հսկողության գոյություն ունեցող փորձի գնահատում,
- ✓ ներքին հսկողության «լավագույն փորձի» ձևավորում օրենսդրական ակտերի, ինչպես նաև ապահովագրական, վարկային և այլ կազմակերպությունների առաջատար փորձի հիման վրա,
- ✓ գոյություն ունեցող փորձի համեմատությունը օրենսդրական պահանջների և «լավագույն փորձի» հետ,
- ✓ ներքին փաստաթղթերի համապատասխանեցումը «լավագույն փորձի» պահանջներին,
- ✓ ներքին հսկողության մարմինների համապատասխանեցումը «լավագույն փորձի» պահանջներին,
- ✓ անձնակազմի կառավարման համակարգի համապատասխանեցումը «լավագույն փորձի» պահանջներին:

Հակաճգնաժամային կառավարումը պետք է հիմնված լինի կառավարման կազմակերպական և տնտեսական ուղղություններ ներառող մեկ միասնական տնտեսական կառուցակարգի վրա: Հակաճգնաժամային կառավարման տնտեսական կառուցակարգը նպաստում է ապահովագրական ընկերության տնտեսական գործունեության հավասարակշռության ապահովմանը: Հակաճգնաժամային կառավարման տնտեսական կառուցակարգի

ձևավորման համար ատենախոսի կողմից մշակվել են մի շարք սկզբունքներ:

Հակաճգնաժամային կառավարման տնտեսական կառուցակարգի ձևավորման նպատակով ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա առաջարկվել է ՀՀ ապահովագրական ընկերության տնտեսական կառուցակարգի ձևավորման և իրագործման մոդել, որը, ատենախոսի համոզմամբ, թույլ կտա ապահովագրական ընկերության ղեկավարությանը ավելի ճկուն արձագանքել ձևավորված իրավիճակին և ժամանակին վերակառուցել իր ներքին համակարգը, օգտագործելով նախապես մշակված գործողությունների ծրագիրը:

***Ատենախոսության «եզրակացություններ»*** բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և կարևոր եզրահանգումները:

- Հակաճգնաժային կառավարման արդյունավետ ինստիտուտի ձևավորումը յուրաքանչյուր երկրի տնտեսության ինստիտուցիոնալ բարեփոխումների կարևորագույն ուղղություններից է, արդյունավետ գործող տնտեսական համակարգի հիմնական բաղադրիչներից մեկը:
- Մասնագիտական գրականության մեջ «հակաճգնաժամային կառավարում» հասկացությունը չունի միանշանակ մեկնաբանություն, ինչը դժվարեցնում է հակաճգնաժամային կառավարման ամբողջական հայեցակարգի մշակումը: Ատենախոսությունում հակաճգնաժամային կառավարումը առաջարկվում է սահմանել որպես կառավարման տեսակ, որը թույլ է տալիս կանխատեսել և մեղմացնել ճգնաժամերը, ինչպես նաև ապահովել կազմակերպության գործառությունը ճգնաժամի ժամանակ գոյատևման ռեժիմում և դուրս բերել այն ճգնաժամային վիճակից նվազագույն կորուստներով:
- Ներկայումս հիմնականում ավարտվել է ՀՀ ապահովագրական շուկայի ձևափոխման գործընթացը: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են ՀՀ ապահովագրական շուկային բնորոշ առանձնահատկությունները:
- Ապահովագրական ընկերությունների արտաքին միջավայրը նրանց ֆինանսական կայունության հիմնական գործոնն է, և տնտեսության մեջ առկա ճգնաժամային երևույթները արտացոլվում են նաև ապահովագրական շուկայի վրա: ՀՀ ապահովագրական շուկայի վիճակի վերլուծության արդյունքները վկայում են ապահովագրական շուկայի առկա ֆինանսական անկայունության մասին, ինչը կապված է ոչ այնքան ֆինանսների անբավարարության, որքան այդ ֆինանսների

կառավարման ցածր մակարդակի հետ: Այդպիսի վիճակը խոչընդոտում է ՀՀ ապահովագրական շուկայի հետագա զարգացմանը:

- Ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի համալիր բնութագիրը նրա ֆինանսական կայունությունն է, որի մակարդակի որոշումը կազմակերպության տնտեսական վիճակի վաղ ախտորոշման և ճգնաժամի ու սնանկացման կանխման անբաժանելի մասն է, հակաճգնաժամային կառավարման հիմքը:
- Կազմակերպությունների, այդ թվում և ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության հիմնախնդրին վերաբերող մոտեցումների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ կազմակերպությունների ֆինանսական կայունության հասկացության տնտեսագիտական բովանդակության և վճարունակության հասկացության հետ դրա փոխհարաբերության վերաբերյալ միասնական մոտեցում դեռևս ձևավորված չէ:
- ՀՀ օրենսդրությամբ «ֆինանսական կայունություն» հասկացությունը սահմանված չէ, ինչը դժվարեցնում է ինչպես տվյալ հասկացության, այնպես էլ այդ հասկացության հետ խիստ փոխկապակցված «վճարունակություն» հասկացության մեկնաբանությունը: Ապահովագրական ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում որևէ կերպ նշված չէ ֆինանսական կայունության դերը ապահովագրական կազմակերպությունների գործունեության մեջ:
- Արդի պայմաններում կարևորագույն հիմնախնդիր է ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակի գնահատման համարժեք մեթոդների և ցուցանիշների բացակայությունը: Ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության գնահատման մեթոդները ունեն որոշակի թերություններ, որոնք զգալիորեն նվազեցնում են ՀՀ-ում դրանց կիրառման արդյունավետությունը:
- Հակաճգնաժամային կառավարման կառուցակարգի շրջանակներում ապահովագրական ընկերության առաջնահերթ խնդիրներից է ֆինանսական վիճակի մշտադիտարկումը և ախտորոշումը՝ գործունեության առկա և պոտենցիալ հիմնախնդիրների նույնականացման և ճշգրտող ու կանխող բնույթի համապատասխան միջոցառումների մշակման նպատակով:
- Կազմակերպությունների անվճարունակության (սնանկացման) կանխատեսման մոդելների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ միջազգային պրակտիկայում այդ նպատակով կիրառվող բազմաթիվ մեթոդներն ու մոդելները հնացել են,

ունեն բազմաթիվ թերություններ, ինչը նվազեցնում է դրանց կիրառման արդյունավետությունը: Բացի այդ, սնանկացման կանխատեսման մոդելները, որոնք մշակվել են ԱՄՆ-ի և այլ երկրների կազմակերպությունների գործունեության հիման վրա, ընդունելի չեն ՀՀ կազմակերպություններում անմիջական կիրառման համար, ինչը կապված է բազմաթիվ գործոնների հետ:

- Ապահովագրական ընկերության անվճարունակության (ճգնաժամային վիճակի) ախտորոշման համար հեղինակի կողմից առաջարկվել է կառուցակարգ, որի կիրառությունը թույլ կտա վերացնել գործնականում և տեսության մեջ առկա մեթոդների թերությունները:
- Ապահովագրական ընկերությունների գործունեությունը անկայուն շուկայական տնտեսության պայմաններում կապված է բարձր աստիճանի ռիսկի և անորոշության հետ: Ռիսկի գործոնների ազդեցությունը հաղթահարելու համար հեղինակի կողմից մշակվել է հայեցակարգային մոդել և առաջարկվել դրա ներդրման ուղղությունները և աշխատանքների բարելավման եղանակները:

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մինասյան Ս.Ա. Հակաճգնաժամային կառավարման էությունը. ժամանակակից մոտեցում, Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա, #9-10 (171-172), Երևան 2014թ., էջ 22-25
2. Մինասյան Ս.Ա. Հակաճգնաժամային կառավարման էությունը և առանձնահատկությունները ապահովագրական ոլորտում, ՀՊՏՀ 24-րդ գիտաժողով, Երևան 2014թ., հոկտեմբեր 29-31, Բաժանմունք III, էջ 430-440
3. Մինասյան Ս.Ա. Ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունը, Հայաստան, Այլընտրանք Գիտական հանդես, #4, Երևան 2015թ., էջ 132-141
4. Մինասյան Ս.Ա. Ապահովագրական ընկերությունների ճգնաժամային վիճակի ախտորոշում. խնդիրները և դրանց լուծման ուղիները, Հայաստան, Այլընտրանք Գիտական Հանդես, #4, Երևան 2015թ., էջ 245-256
5. Մինասյան Ս.Ա. Ռիսկի կառավարումը ապահովագրական ընկերության հակաճգնաժամային կառավարման համակարգում, Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա, #11-12 (183-184), Երևան, 2015թ., էջ 10-12

**МИНАСЯН САМВЕЛ АРМЕНОВИЧ**

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ АНТИКРИЗИСНОГО УПРАВЛЕНИЯ В СТРАХОВЫХ КОМПАНИЯХ РА**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02. – “Экономика, управление хозяйством и его сферами”.

Защита состоится 10-го марта 2016 года в 15:30 на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего при Армянском государственном экономическом университете, по адресу: г. Ереван, 0025, ул. М. Налбандяна 128.

## РЕЗЮМЕ

Страховые организации являются одним из основных элементов экономики страны, обеспечивая возмещение убытков и стабилизируя устойчивое развитие национальной экономики и социальной сферы. Изменение форм собственности, усиление рыночной конкуренции, кризисные явления на финансовых и потребительских рынках и увеличение множества иных рисков требуют совершенствования механизмов и инструментов, обеспечивающих финансовую устойчивость страховых организаций, достижения ими стратегических целей в условиях кризиса. В этом смысле одним из важнейших механизмов является эффективное антикризисное управление страховыми организациями. Анализ существующего научно-методического обеспечения показал, что отсутствует научно обоснованный механизм эффективного антикризисного управления страховыми организациями. Кроме того, актуальность данной проблемы также заключается в том, что большинство современных отечественных исследований в данной области сосредоточено на адаптации зарубежных методик, технологий управления к проблемам армянских предприятий без учета национальных особенностей страховой системы РА.

На основании вышеизложенного, можно утверждать, что выявление и исследование проблем и механизмов антикризисного управления страховых компаний приобрело в настоящее время высокую значимость, чем и обуславливается актуальность темы исследования.

Объектом исследования является система антикризисного управления страховых компаний РА. Предметом исследования являются механизмы антикризисного управления страховых компаний и организационно-экономические отношения, возникшие в этом процессе.

Цель исследования – разработка механизмов и предложений по повышению эффективности сформировавшейся в страховых компаниях РА системы антикризисного управления путем системного изучения и анализа ее основных проблем. Для достижения поставленной цели в диссертации поставлены следующие задачи:

- изучить механизмы и подходы антикризисного управления,
- выявить причины и факторы возникновения кризисов в страховых компаниях,
- уточнить содержание понятия “антикризисное управление”
- изучить современные тенденции и особенности развития международной практики антикризисного управления,
- разработать основные направления антикризисного управления страховых компаний,
- предложить механизм диагностики кризисного состояния страховой компании с использованием экономико-математического аппарата.

Научная новизна данной работы состоит в следующем:

- Предложен новый подход к классификации видов финансовой устойчивости страховых компаний, который позволит уточнить характеристики финансовых состояний этих компаний и разработать соответствующие стратегии.
- Предложен механизм диагностики кризисного состояния страховой компании который позволит разработать соответствующие антикризисные мероприятия.
- Разработана концептуальная модель антикризисного управления страховых компаний и предложены направления ее внедрения.
- Разработаны и обоснованы принципы и методические подходы формирования экономического механизма антикризисного управления страховых компаний.

**MINASYAN SAMVEL ARMEN**

# MODERN PROBLEMS OF ANTI-CRISIS MANAGEMENT IN THE RA INSURANCE COMPANIES

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economies in the specialty 08.00.02. - ‚Economics, Management of the Economy and its Sphere‘

The defense of this thesis will take place on march 10, 2016 at 15:30 at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128, M. Nalbandyan str., Yerevan, 0025.

## RESUME

Insurance companies are one of the key elements a national economy, providing compensation and stabilizing the sustainable development of national economy and social sphere. Changing patterns of ownership, increased market competition, the crisis in the financial and consumer markets and an increase in the plurality of other risks need to improve the mechanisms and tools to ensure the financial stability of insurance organizations achieve their strategic objectives in a crisis. In this sense, one of the most important mechanisms is an effective anti-crisis management by insurance companies. An analysis of the existing scientific and methodological support has shown that there is no scientifically based mechanism for effective anti-crisis management by insurance companies. In addition, the relevance of the problem also consists in the fact that most of today's national researches in this area focused on the adaptation of foreign methods, management technology to the problems of Armenian companies without taking into account national peculiarities of the Armenian insurance system.

Based on the above, it can be argued that the identification and investigation of the problems and mechanisms of anti-crisis management of insurance companies now acquired the high importance and this conditioned the relevance of the research topic.

The object of research is the system of anti-crisis management of insurance companies of Armenia. The subjects of research are the mechanisms of anti-crisis management of insurance companies and the organizational and economic relations arising in the process.

The purpose of research - to develop mechanisms and proposals to improve the efficiency of formed insurance companies in the RA system of anti-crisis management through systematic study and analysis of its main problems. To achieve the goal in the thesis has following objectives:

- explore the mechanisms and approaches of anti-crisis management,
- identify the causes and factors of crises in the insurance companies,
- clarify the meaning of "anti-crisis management",

- explore current trends and features of the development of international practice of anti-crisis management,
- develop main directions of anti-crisis management of insurance companies,
- propose diagnostics mechanism of the crisis state of the insurance company with the use of economic-mathematical apparatus.

The scientific novelty of this work is as follows:

- Is proposed a new approach to the classification of financial stability of insurance companies, which will clarify the characteristics of the financial conditions of the companies and to develop appropriate strategies.
- Is proposed the mechanism of diagnostics of the crisis state of the insurance company, which will allow develop appropriate anti-crisis measures.
- Is developed a conceptual model of anti-crisis management of insurance companies and offered directions for its implementation.
- Is developed and substantiated the principles and methodological approaches for formation of the economic mechanism of anti-crisis management of insurance companies.